

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Սնանկության իրավահարաբերությունները հիմնականում կարգավորված են 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք): Հաշվի առնելով տնտեսական հարաբերություններում սնանկության ինստիտուտի կարևորությունը և ըստ այդմ՝ դրա արդյունավետ կարգավորման դերն ու նշանակությունը, Օրենքի ընդունումից հետո, այդ թվում նաև՝ 2016 թվականին, կատարվել են մի շարք բարեփոխումներ, որոնց արդյունքում, այնուամենայնիվ, առկա են մնացել իրավակարգավորման թերություններ ու բացեր, որոնք մատնանշվել են, մասնավորապես, Համաշխարհային բանկի կողմից իրականացված հետազոտություններում:

«Գործարարությամբ զբաղվելը-2019» Համաշխարհային բանկի զեկույցի¹ համաձայն գնահատված երկրների շարքում «Սնանկության կարգավորում» ցուցիչով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցրել է 95-րդ տեղը: Ընդ որում, «Սնանկության կարգավորում» ցուցիչի հաշվարկման համար գնահատվող ենթացուցիչներով Հայաստանի Հանրապետության համար պատկերը հետևյալն է՝

- «Պարտքի մարման համար պահանջվող ժամանակը» ենթացուցիչով Հայաստանի Հանրապետությունում սնանկության վարույթի ընդհանուր տևողությունը գնահատվել է 1.9 տարի (այս ենթացուցիչով լավագույն արդյունքն է համարվում 4 ամիսը (Իռլանդիա)),

- «Պարտքի մարման համար պահանջվող ծախսերը» ենթացուցիչով Հայաստանի Հանրապետությունում սնանկության վարույթի ծախսատարությունը (ներառում է դատական ծախսերը, սնանկության կառավարիչների, աճուրդը անցկացնողների, գնահատողների,

¹ <http://www.doingbusiness.org/rankings>

մասնագետների վճարները և մյուս բոլոր վճարները և ծախսերը) գնահատվել է գույքի արժեքից 11.0% (կառավարչի վարձատրություն մինչև 4%, փաստաբանի վարձատրություն մինչև 3,5%, գույքի գնահատման ծախսեր մինչև 1,5% և դատական ծախսեր մինչև 2%) (այս ենթացուցիչով լավագույն արդյունքն է համարվում 1% (Նորվեգիա)),

- Պարտատերերի՝ պահանջի բավարարման աստիճանը» ենթացուցիչով Հայաստանի Հանրապետությունում սնանկության վարույթով պարտքի բավարարման աստիճանը գնահատվել է 38.2% (այս ենթացուցիչով լավագույն արդյունքն է համարվում 93.1% (Նորվեգիա)),

- «Սնանկության վարույթի արդյունավետության ինդեքսը» ենթացուցիչով Հայաստանի Հանրապետությունում սնանկության վարույթի արդյունավետությունը գնահատվել է 16 միավորից 7.5:

Հայաստանի Հանրապետության զբաղեցրած դիրքը և արձանագրած ցուցանիշները արդյունք են «Գործարարությամբ զբաղվելը-2019» Համաշխարհային բանկի զեկույցի «Սնանկության կարգավորում» ցուցիչով ներկայացված որոշ հարցերի վերաբերյալ Օրենքում անհրաժեշտ կարգավորումների բացակայության կամ թերի կարգավորումների առկայության:

Միաժամանակ, իրավակիրառ պրակտիկայում վերհանվել են Օրենքի կիրառման մի շարք խնդիրներ, որոնց լուծումն ունի առանցքային նշանակություն սնանկության ինստիտուտի շարունակական կատարելագործումն ապահովելու նպատակով:

Այսպիսով, Օրենքում առկա թերություններն ու բացերը հանգում են, մասնավորապես, հետևյալին՝

1) Սնանկության կառավարիչներ

- Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ սնանկության կառավարչին ներկայացվող պարտադիր պահանջները բավարար չեն իրեն վերապահված գործառնություններն արդյունավետորեն իրականացնելու համար: Բացի այդ, Օրենքում առկա ստաժավորումը հանդիսանում է ոչ պարտադիր և հետապնդվող նպատակի ապահովման համատեքստում ևս խնդրահարույց է թվում:

ՄԱԿ-ի առևտրային իրավունքի հանձնաժողովի «Սնանկության իրավունքի վերաբերյալ» օրենսդրական ուղեցույցում² սահմանվում է, որ սնանկության վարույթի բարդությունը ցանկալի է դարձնում սնանկության կառավարչի՝ իրավունքի բնագավառում համապատասխան որակավորում (ոչ միայն սնանկության, այլև վերաբերելի ֆինանսական, առևտրային, հարկային իրավունքի) ունենալու հանգամանքը, ինչպես նաև համապատասխան փորձ առևտրային կամ ֆինանսական հարցերում՝ ներառյալ հաշվապահության ոլորտում: Համաշխարհային բանկը, առանձին գնահատման արժանացնելով Օրենքով նախատեսված սնանկության կառավարիչների վերաբերյալ կարգավորումները, «Հայաստանի Հանրապետությունում սնանկության վարույթի մասին»

² UNICITRAL, Legislative guide on insolvency law, 2005, էջ 175
http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf

2014 թվականի զեկույցով, ի թիվս այլնի, առաջարկել է երաշխավորել մասնագիտության մեջ նոր անձանց մուտքը և սնանկության կառավարիչների լիցենզավորման համար նախատեսել որակավորման քննություն և ստաժավորում:

- Սնանկության կառավարչի գործունեության ընդհանուր վերահսկողությունը ներկայումս Օրենքը վերապահել է «Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը» (այսուհետ՝ Կազմակերպություն), որը դրա շրջանակներում ունի կարգապահական պատասխանատվություն կիրառելու իրավասություն: Այնինչ, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ նման վերահսկողությունը բավարար համարվել չի կարող: Մասնավորապես, Կազմակերպության ողջ գործունեության ընթացքում կառավարիչների նկատմամբ հարուցվել է 23 կարգապահական վարույթ, որից 6-ը կարգապահական հանձնաժողովի կողմից մերժվել է, 10-ը՝ կարճվել, 7-ով հարուցվել է կարգապահական վարույթ և կիրառվել է նկատողություն: Ընդ որում, կիրառված նկատողություններից չորսը տրվել են Կազմակերպության նկատմամբ սնանկության կառավարիչների ունեցած անդամավճարի հետ կապված պարտավորությունները չկատարելու համար:

Միևնույն ժամանակ, Արդարադատության նախարարություն պարբերաբար մուտքագրվում են բազմաթիվ դիմում-բողոքներ՝ սնանկության կառավարիչների գործունեության օրինականության բացահայտման խնդրանքով: Համապատասխան դիմումների ուսումնասիրության համար Արդարադատության նախարարությունը չունի բավարար լծակներ դիմումներում բարձրացված հարցերն իրավական առումով ուսումնասիրելու և վերջնական լուծում տալու համար այն պարագայում, երբ սնանկության կառավարիչների որակավորումն իրականացվում է հենց նախարարության կողմից:

Բացի այդ, Արդարադատության նախարարությունն օժտված չէ համապատասխան լծակներով սնանկության ոլորտի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ հավաքագրելու ուղղությամբ: Արդարադատության նախարարության կողմից մի շարք հարցերի վերաբերյալ Կազմակերպությանը կատարված հարցումներին տրվել է պատասխան առ այն, որ այդ հարցումներին պատասխանելու հարցը պետք է քննարկվի Կազմակերպության ընդհանուր ժողովում, ինչի լիազորությամբ, սակայն, ընդհանուր ժողովն օժտված չէ ոչ օրենքով, և ոչ էլ Կազմակերպության կանոնադրությամբ:

Առկա վիճակը հանգեցնում է նաև կառավարիչների հաշվետվողականության նվազեցմանը, ինչի արդյունքում նվազում է ոլորտի կարգավորման արդյունավետությունը:

Մինչդեռ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ երկրներում պետական լիազոր մարմինն է իրականացնում է կարգավորիչ գործառույթներ սնանկության ոլորտում, այդ թվում՝ կառավարիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը (օրինակ՝ Լիտվա և Ֆրանսիա)³: Օրենքով թեև դատարանն ունի վերահսկողական գործառույթներ սնանկության կառավարչի

³ French Insolvency law, Survey of Reforms in practice, 2016

նկատմամբ, այդուհանդերձ նախատեսված չէ դատարանի իրավունքը՝ ցանկացած պահի պահանջել տեղեկատվություն և փաստաթղթեր սնանկության կառավարչից: Դատարանի կողմից սնանկության կառավարիչների նկատմամբ վերահսկողություն իրականացնելը որոշ երկրների օրենքներում ուղղակիորեն նախատեսված է⁴:

Ավելին՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից 2014թ. կատարված՝ 27 երկրների փորձի հիման վրա սնանկության կառավարիչների գնահատման վերաբերյալ զեկույցից⁵ պարզ է դառնում, որ նշված 27 երկրից մեծամասնությունում պետական մարմինները (նախարարությունների մակարդակով) սնանկության ոլորտում օժտված են կարգավորիչ իրավասություններով:

Հարկ է նշել նաև, որ ներկայումս ՀՀ օրենսդրությամբ ներդրված է Արդարադատության նախարարության կարգավորիչ իրավասության ներքո արդյունավետ գործող համանման ինստիտուտ. խոսքը վերաբերում է նոտարներին և Նոտարական պալատին, ընդ որում՝ «Նոտարիատի մասին» օրենքի համաձայն նոտարն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է և գործում է Սահմանադրության և օրենքների հիման վրա, իսկ Արդարադատության նախարարությունն իրականացնում է կարգավորիչ լիազորություններ այս ոլորտում՝ նոտարների որակավորում, կարգապահական պատասխանատվության ենթարկում և այլն, առանց նոտարների գործունեության անկախության խաթարման:

- Սնանկության կառավարիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորված չեն ոչ Օրենքով, և ոչ էլ Կազմակերպության կանոնադրությամբ: Մինչդեռ, կարգապահական պատասխանատվության հիմքերը և վարույթի հետագա ընթացքը պետք է հստակ նախատեսված լինեն օրենսդրությամբ և հնարավորություն տան անձին կանխատեսելու իր համար հնարավոր անբարենպաստ հետևանքները:

- Կազմակերպությունը գործնականում սահմանել է մուտքի վճար 500,000 ՀՀ դրամի չափով, ինչը կարող է սահմանափակել ոլորտը նոր սնանկության կառավարիչներով համալրելու հնարավորությունը:

- Սնանկության կառավարիչների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքի 30-րդ հոդվածում, ընդ որում՝ սահմանված վարձատրության տարբեր տոկոսադրույքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանցով սնանկության կառավարչի վարձատրությունը հաշվարկելու դեպքում, այդ վարձատրությունն այնքան բարձր է ստացվում, որ սնանկության կառավարիչները չեն ձգտի

⁴ Գերմանիայի Սնանկության մասին ստատուտի 58-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը վերահսկողություն է իրականացնում սնանկության կառավարչի նկատմամբ: Դատարանը կարող է ցանկացած պահի սնանկության կառավարչից պահանջել տեղեկատվություն կամ հաշվետվություն սնանկության վարույթի ընթացիկ վիճակի, իր կողմից ձեռնարկվող միջոցառումների մասին: Ընդ որում, Դատարանի որոշումները չկատարելու դեպքում սնանկության կառավարչի նկատմամբ կարող է տուգանք կիրառվել:

⁵<https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395277239633&pagename=EBRD%2FContent%2FDownloadDocument>

միջոցներ ձեռնարկել սնանկության վարույթը ֆինանսական առողջացման ավարտելու ուղղությամբ: Օրենքի 30-րդ հոդվածում սահմանված տոկոսադրույքները անփոփոխ են անկախ սնանկության վարույթի տևողությունից, ինչը ևս չի խրախուսում սնանկության կառավարիչներին կրճատելու սնանկության վարույթի տևողությունը:

«Գործարարությամբ զբաղվելը-2019» Համաշխարհային բանկի զեկույցի «Սնանկության կարգավորում» ցուցիչով Հայաստանի Հանրապետությունում սնանկության վարույթի ծախսատարությունը (ներառում է դատական ծախսերը, սնանկության կառավարիչների, աճուրդը անցկացնողների, գնահատողների, մասնագետների վճարները և մյուս բոլոր վճարները և ծախսերը) գնահատվել է գույքի արժեքից 11.0%, որից կառավարչի վարձատրությունը՝ մինչև 4%, այն դեպքում երբ, օրինակ ճապոնիայում այդ ցուցանիշը կազմում է 1 %, իսկ ուսումնասիրված բարձր դիրք զբաղեցնող երկրներում սնանկության կառավարիչների վարձատրության ծախսը կազմում է 1-5%: Ուստի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ՀՀ դիրքի բարելավման տեսանկյունից ներկայումս առկա է նաև սնանկության վարույթի ծախսատարության, այդ թվում՝ կառավարչի վարձատրության աստիճանական նվազեցման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

2) Սնանկության վարույթի արդյունավետություն և ժամկետներ

- Սնանկության վարույթի հետ կապված առանձին քաղաքացիական գործերի քննությունը ներկայումս իրականացվում է ապակենտրոնացված ձևով, որն անուղղակիորեն ազդում է սնանկության վարույթի ժամկետների և արդյունավետության վրա:

- Օրենքով սնանկության կառավարչի կողմից իրականացվող մի շարք առանցքային գործողությունների (օրինակ՝ աճուրդի կազմակերպում, կրկնակի աճուրդի կազմակերպում և այլն) կատարման համար միասնական ժամկետներ նախատեսված չեն, իսկ որոշակի գործողությունների համար սահմանված են այնքան երկար ժամկետներ, որոնք ինքնաբերաբար երկարացնում են վարույթի տևողությունը:

- Հստակեցման կարիք ունեն սնանկության վարույթի ընթացքում ընդունվող որոշումների բողոքարկման կարգը և ժամկետները:

- Սնանկության գործի վարման, սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկությունների հասանելիության ապահովման, պարտատերերի ժողովների անցկացման, ինչպես նաև պարտապանի գույքի վաճառքի և սնանկության այլ ընթացակարգերի առավել արագ, արդյունավետ և թափանցիկ կերպով իրականացնելու նպատակով առկա է գործող կարգավորումները վերանայելու անհրաժեշտություն:

- Օրենքի 56-րդ հոդվածով կարգավորված են պարտապանի գույքի գույքագրման հետ կապված հարցերը, մինչդեռ կառավարչի այս լիազորության իրականացման համար անհրաժեշտ է պարտապանի կողմից հստակ քայլերի, օրինակ՝ հայտարարագրի՝ գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին տեղեկատվության ներկայացում: Պետք է նշել նաև, որ գույքագրման ժամանակ պարտապանի ցանկության բացակայության դեպքում սնանկության կառավարիչը ներկայումս չունի գույքի իրացումից հետո՝ գույքը ոչ

օրինական հիմքերով տիրապետող անձանց վտարելու իրավական հիմքեր, ինչը որոշ դեպքերում խոչընդոտ է սնանկության կառավարչի կողմից լիարժեք գույքագրում և գույքի վաճառք իրականացնելու համար:

- Միաժամանակ, սնանկության վարույթի օպերատիվությունն ապահովելու համար տարբեր երկրների օրենքներով սնանկության վարույթի ընթացքում իրականացվող գործողությունների կատարման համար սահմանված են հստակ ժամկետներ⁶:

3) Այլ դրույթներ

- Օրենքով կարգավորված չեն պարտապանի կողմից սնանկ ճանաչվելուց հետո իր գործունեության համար անհրաժեշտ նոր ֆինանսական պարտավորություններ ստանձնելու, իր համար ծանր պայմաններով կնքված պայմանագրերից հրաժարվելու, իր համար կենսական նշանակություն ունեցող պայմանագրերը շարունակելու հնարավորությունը, որոնք բխում են «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Սնանկության ճանաչում» ցուցիչից:

- Օրենքը չի կարգավորում ապահովված պարտատիրոջ պահանջը երրորդ անձի գույքով ապահովված լինելու դեպքում պարտապանի և երրորդ անձ գրավատուների միաժամանակյա սնանկության դեպքում պարտատիրոջ պահանջի բավարարման, ինչպես նաև երրորդ անձ գրավատուի սնանկության պայմաններում այդ անձի գույքով ապահովված պարտավորությունների կատարման և գույքի իրացման հարցերը:

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսվել է սնանկության դատարանը՝ որպես մասնագիտացված դատարան և սահմանվել է, որ սնանկության դատարանին են ենթակա սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը: Վերոնշյալի հիման վրա անհրաժեշտ է Օրենքում նախատեսել նշված դրույթների ապահովմանն ուղղված համապատասխան իրավակարգավորումներ:

- Անհրաժեշտ է ապահովել սնանկության վերաբերյալ գործերի մասին տեղեկատվության մատչելիությունը և հրապարակայնությունը, այդ թվում՝ սնանկության վարույթի ընթացքում կայացվող դատական ակտերի հրապարակման միջոցով՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքին և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներին համահունչ:

- Միաժամանակ գործող օրենսդրության պայմաններում կարող է առկա լինել իրավիճակ, երբ իրավաբանական անձի լուծարումը գրանցվի այն պայմաններում, երբ այդ անձի մասնակցությամբ դեռևս առկա է չավարտված դատական վարույթ, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում լուծարվող իրավաբանական անձանց համար սահմանել պարտականություն՝ լուծարումը գրանցելու դեպքում գրանցումն իրականացնող մարմնին

⁶ Իտալիայում 2016 թվականից սկսած սնանկության ոլորտի բարեփոխումների առանցքային կետերից է սնանկության վարույթում կատարվող գործողությունների համար հստակ ժամկետների նախատեսումը Insolvency and enforcement reforms in Italy, IMF working paper, July, 2016

տեղեկություն տրամադրել իր մասնակցությամբ հարուցված և չավարտված դատական գործերի, ինչպես նաև հարուցված և չկարճված կատարողական վարույթների բացակայության մասին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) կարգավորվել են հետևյալ հարցերը⁷.

1) նախատեսվել են սնանկության դատարանին սնանկության գործերի ենթակայությունը սահմանող դրույթներ.

2) սնանկության վարույթին առնչվող առանձին քաղաքացիական գործերը կենտրոնացել են սնանկության վարույթի շրջանակներում.

3) սահմանազատվել և հստակեցվել են կամավոր և հարկադիր սնանկության վարույթների հարուցման ընթացակարգերը.

4) սահմանվել է սնանկության վարույթի ընթացքում առանձին ակտի ձևով կայացվող որոշումների՝ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու մասին դրույթ.

5) նախատեսվել է սնանկության դատարանի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և սնանկության կառավարիչների միջև փաստաթղթաշրջանառությունն էլեկտրոնային եղանակով իրականացնելու կարգ սահմանելու հնարավորությունը.

6) հստակեցվել են սնանկության վարույթի ընթացքում որոշումների կայացման և բողաքարկման կարգը և ժամկետները.

7) հանվել է սնանկության կառավարչի թեկնածություն առաջարկելիս դատարանին համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու պահանջը.

8) կարգավորվել են սնանկության վարույթի կարճման կամ դիմումի մերժման դեպքում ժամանակավոր կառավարչի վարձատրության հարցերը.

9) կառավարիչներին հաշվառելու, համակարգչային ծրագրի միջոցով ընտրելու գործառնությունները վերապահվել է Արդարադատության նախարարությանը՝ ի լրումն կառավարիչների որակավորումն իրականացնելու վերջինիս լիազորության.

10) բացառվել է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից առանց Արդարադատության նախարարության հետ համաձայնեցման որոշակի շեմը գերազանցող անդամավճարների և անդամներից գանձվող ցանկացած այլ վճարման չափի սահմանումը.

11) սահմանվել են կարգապահական վարույթի հարուցման և իրականացման կարգը և այլ մանրամասները՝ ժամկետները, առիթներն ու հիմքերը.

⁷ Նախագծով առաջարկվող կարգավորումների զգալի մասին դրական գնահատական է տվել «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը» (EBRD)՝ 2018թ. օգոստոսի 20-ին Արդարադատության նախարարություն ներկայացված իր զեկույցում:

12) որոշակիորեն նվազեցվել են սնանկության կառավարիչների վարձատրության տոկոսադրույքները, սահմանվել են հավելավճարներ սնանկության վարույթը սեղմ ժամկետներում ավարտելու դեպքում և ավելացվել է ֆինանսական առողջացմամբ սնանկության վարույթն ավարտելու դեպքում վճարվող տոկոսադրույքի չափը.

13) հստակեցվել են սնանկության կառավարիչն ներկայացվող պահանջները.

14) սնանկության կառավարիչների կողմից իրականացվող որոշակի գործողությունների համար սահմանվել են հստակ ժամկետներ.

15) հստակեցվել է սնանկության կառավարչի գործողությունների և անգործության բողոքարկման կարգը.

16) սահմանվել են սնանկության կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև որակավորումը դադարեցնելու և կասեցնելու հիմքերը և կարգը.

17) կարգավորվել են սնանկ ճանաչված պարտապանի և սնանկ ճանաչված երրորդ անձ գրավատուի գրավի առարկա գույքի վաճառքի հետ կապված հարցերը

18) կարգավորվել են երրորդ անձ գրավատու հանդիսացող պարտապանին պատկանող գույքով ապահովված պարտավորությունների կատարման հետ կապված հարցերը.

19) երրորդ անձ գրավատուի, երաշխիք տված անձի և երաշխավորի համար ապահովվել են պարտապանի իրավունքներին հավասար իրավունքներ.

20) կանոնակարգվել է պարտապանի իրական և հնարավոր գույքային զանգվածի վերաբերյալ տեղեկությունները պարտապանի կողմից հայտնելու գործընթացը, սահմանվել է պատասխանատվություն այդ առումով պարտապանի կողմից իր պարտականությունները չկատարելու համար.

21) սահմանվել է պարտապանի կողմից իր համար կենսական նշանակություն ունեցող պայմանագրերը շարունակելու, իր համար ծանր պայմաններով կնքված պայմանագրերից հրաժարվելու, մինչև ֆինանսական առողջացման ծրագիրը ֆինանսական պարտավորություններ ստանձնելու հնարավորությունը.

22) նախատեսվել է յուրաքանչյուր պարտատիրոջ իրավունքը՝ կառավարիչից պահանջելու պարտապանի ֆինանսական վիճակի և գործունեության վերաբերյալ տեղեկություններ.

23) սահմանվել է սնանկ ճանաչված անձի ֆինանսական վիճակի վերլուծության ժամանակ կեղծ կամ կանխամտածված սնանկության հիմքերին անդրադառնալու պահանջ.

24) նախատեսվել են սնանկության գործի, այդ թվում՝ պարտատերերի պահանջների գրանցամատյանի վարման, ինչպես նաև գույքի վաճառքը էլեկտրոնային եղանակով իրականացնելուն վերաբերող կարգավորումներ.

25) հստակեցվել է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության բովանդակությունը.

26) սահմանվել է վաճառքի ենթակա, ինչպես նաև իրացված անշարժ գույքից դրանց տիրապետող անձանց վտարելու պահանջ ներկայացնելու՝ կառավարչի իրավունքը.

27) սահմանվել է իրավաբանական անձի լուծարման գրանցման դեպքում այդ անձի մասնակցությամբ հարուցված և չավարտված դատական գործերի, ինչպես նաև հարուցված և չկարճված կատարողական վարույթների բացակայության մասին տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունը:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման դեպքում ակնկալվում է ներդնել սնակության վարույթում ծախսերի, ժամկետների, կառավարիչների հաշվետվողականության, ապահովված իրավունքի առարկայի իրացման և ֆինանսական առողջացման գործուն կարգավորումներ, ինչպես նաև վերացնել Օրենքում առկա բազմաթիվ անհստակություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԿԿԱՆ ՆԿԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱՒՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» հայաստանի հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում չի նախատեսվում: